Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմերի 20-ի N 1 որոշմամբ

Մրցույթի ծածկագիրը՝ ԿԳՄՄՆ ԴՇ 1146/12008

Պետական մարմինը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նաև պատվիրատու), որը գտնվում է Վազգեն Սարգսյան 3 հասցեում, հայտարարում է դրամաշնորհի հատկացման մրցույթ, որը կազմակերպվում է armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը սահմանված կարգով կառաջարկվի կնքել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Սույն մրցույթի անցկացման կարգը, հայտ կազմելու ու ներկայացնելու պայմանները ինչպես նաև մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպություններին ներկայացվող պայմանները սահմանված են հրավերով:

Մրցույթին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև **2022 թվականի հոկտեմբերի 13-ը ժամը 16:00-ն**: Սույն հայտարարությունն էլեկտրոնային armeps (www.armeps.am) համակարգում հրապարակվելու օրը հրապարակվում է նաև պատվիրատուի՝ www.escs.am հասցեով գործող պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ armeps համակարգի միջոցով, **հոկտեմբերի 13-ին, ժամը 16:00-ին**:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Թեհմինե Կարախանյանին:

Հեռախոս 010 599 619 էլ. փոստ tehmine.karakhanyan@escs.am